

ՀԱՎԱՏՈՎ ՈՒ ՆՎԻՐՈՒՄՈՎ

(ԱՐԱՄ ԻՆՃԻԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

Գրականագետ-բանասեր Արամ Ինճիկյանը մեր գրականության այն հազվագյուտ երախտավորներից է, որոնք իրենց գիտակցական ամբողջ կյանքը նվիրել են ժողովրդի հոգևոր մշակույթի զարգացմանը: Եվ այսօր, իր ծննդյան 60-ամյա տարելիցին, գրականագետը հանգիստ խղճով կարող է կրկնել հանրահայտ ասույթը, որ ինքը պարտք չի մնացել ժամանակին:

... Հողի աշխատավորի ծանր վիճակը ախալցխացի Մկրտիչ Ինճիկյանի մոտ չէր մեռցրել ուսման սերը և նա իր որդուն միջնակարգ կրթություն տալուց հետո ուղարկեց Երևան՝ ուսումը շարունակելու: Քսաներկումայա Արամը ընդունվում է Երևանի պետական համալսարանի լեզվի ու գրականության ֆակուլտետը, ապա՝ նույն համալսարանի ասպիրանտուրան, որն ավարտում է 1937 թվականին: Թե՛ ուսանողական տարիներին, և թե՛, մանավանդ, ասպիրանտուրայում ուսումնառության ժամանակ, հստակորեն բացահայտվեցին Ինճիկյանի գրականագիտական կարողությունները: 1934 թվականից սկսած, Հայաստանի պարբերականներում հրատարակվող զանազան մեծ ու փոքր գրախոսականները արդեն խոսակցություն բացեցին նրա մասին՝ որպես շնորհալի և ապագա խոստացող երիտասարդ գրականագետի: Ամեն ինչ կարծես լավ էր սկսվել, և թվում էր ամեն ինչ լավ է ընթանում, բայց...

1939 թվականին սկսված սովետա-ֆիննական պատերազմը զինակոչեց նաև Ինճիկյանին: Այդ պատերազմը ավարտված-չավարտված՝ պայթեց մեծ Հայրենականը և գրականագետը նորից հագավ զինվորի համազգեստը՝ ժամանակավորապես մի կողմ դնելով գրիչը:

Ինճիկյանի գիտական գործունեության՝ ըստ ամենայնի բեղմնավոր շրջանը սկսվում է 1946 թվականից, երբ բանակից զորացրվելուց հետո աշխատանքի է անցնում

գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում որպես ավագ գիտական աշխատող: Նույն թվականի վերջերին նա պաշտպանության է ներկայացնում իր ուսումնասիրությունը՝ «Արա Գեղեցիկի առասպելը և նրա գրական մշակումները» թեմայով (հրատարակված 1967 թ.), որի համար նրան շնորհվում է քանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Եթե չհաշվենք սկզբնական շրջանում տպագրված հոդվածները, Ինճիկյանի առաջին երկու գրքերը՝ «Ծատուրյանի կյանքը» և «Ավետիք Իսահակյան» (երկուսն էլ՝ 1940 թ.), եկան լրացնելու այն բացը, որը նկատվում էր սովետահայ գրականագիտության մեջ մեր այդ երկու դասականների կապակցությամբ: Այնուհետև իրար հաջորդած զանազան ուսումնասիրությունները («Ազգային-ազատագրական շարժման արտացոլումը Պեշիկթաշյանի երկերում», «Լերմոնտովը և հայ վաթսունականները», «Բելինսկին հայ գրականության մեջ») եկան կրկին հավաստելու, որ գրականագետը հետևողականորեն շարունակում է իր պրպտումները և ամենուրեք ասելու նոր և թարմ խոսք է գտնում: Այդ ամենի բնականոն զարգացման հետևանքը եղավ 1964 թվականին հրատարակած և մոտ 15 տարվա քրտնաջան աշխատանքի արդյունք հանդիսացող «Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը» աշխատությունը, որը հաստատուն կերպով դարձել է մասնագետների սեղանի գիրքը և մեծ լուսավորիչ-դեմոկրատի անվանն ու գործին պատիվ բերող աշխատություն:

Ինճիկյանի գործունեությունն ավելի նպատակադիր է դառնում 1958 թվականից սկսած, երբ նրա ակտիվ նախաձեռնությամբ և գրականության ինստիտուտի ջանքերով ստեղծվում է տեքստաբանության բաժին, որի վարիչի պարտականությունները հանձնարարվում է նրան: Սկսվում է գիտնականի աշխատանքների մի նոր և կարևոր էտապը:

Հայ դասականների տեքստերի գիտական հրատարակության աշխատանքները, իհարկե, անձանոթ բնագավառ չէին Ինճիկյանի համար: Դեռ 1937 թվականին նա հրատարակության էր պատրաստել Ա. Ծատուրյանի բանաստեղծությունների ամբողջական ժողովածուն՝ իր առաջաբանով ու համապատասխան

ծանոթագրություններով, 1941 թվականին հրատարակել էր Ս. Շահագիզի ստեղծագործությունների ժողովածուն, իսկ 1947 թվականին լույս էր տեսել նաև Պեշկիթաշյանի «Տաղերը»:

Աշխատանքները հաջորդեցին մեկը մյուսին: 1959 թվականին ավարտվեցին Թումանյանի երկերի վեցհատորյա ժողովածուի հրատարակության հետ կապված աշխատանքները՝ յուրաքանչյուր հատորը մոտ 30 մամուլ ծավալով: Ինձիկյանը ոչ միայն գիտական ուղղություն էր տալիս ամբողջ աշխատանքներին, այլև անձնապես մասնակցում էր յուրաքանչյուր հատորի պատրաստման (տեքստ, առաջաբան, ծանոթագրություններ) բարդ ու դժվար գործին: Այնուհետև տեքստաբանության բաժինը օրակարգի հարց դարձրեց մեր մյուս դասականի՝ Հակոբ Պարոնյանի ստեղծագործությունների գիտական հրատարակությունը: 1962 թվականին գրախանութների գրադարակներում և ընթերցողների սեղանին հայտնված Պարոնյանի երկերի տասհատորյա ժողովածուի առաջին հատորը, համապատասխան տեքստային տարբերակներով, հմուտ ծանոթագրություններով ու մեկնաբանություններով, ինքն արդեն խոսում էր իր մասին: Առ այսօր հրատարակված Պարոնյանի յոթ հատորները միմի գեղեցիկ վկայական են տեքստաբանության բաժնի անդադրում գործունեության: Ավելացնենք այս բոլորին նաև Պատկանյանի երկերի գիտական հրատարակությանը ձեռնամուխ լինելու հանգամանքը, որն սկսվեց 1963 թվականին, այսինքն՝ նախորդի հետ գրեթե միաժամանակ և արդեն հրատարակվել է վեց հատոր, ավելացնենք, որ տեքստաբանական բաժնին էր վիճակված իր ավարտին հասցնել Ավ. Իսահակյանի երկերի ակադեմիական հրատարակության ծանր ու պատվավոր գործը:

Իհարկե, այսպիսի ընդարձակածավալ գործունեությունը արգելք չհանդիսացավ Ինձիկյանին նորանոր ու արժեքավոր հայագիտական աշխատություններով հանդես գալու համար: 1967 թվականին հրատարակվեց նրա հաջորդ գիրքը՝ «Մտերիմներ և մտորումներ» բնութագրական վերնագրով, որտեղ գրականագետը հանրագումարի էր բերել տարիների իր գրական-քննադատական վաստակի ընտիր մասը: Գրականագետը ընտրել-առանձնացրել է իր այն գործերը, որոնք առնչվում են հիմնականում 19-րդ դարի գրական և հասարակական պրոցեսների հետ, և հետևաբար, մեկնաբանում են

գերագանցապես 19-րդ դարի մեր գրականության առավել հանգուցային ու առաջնահերթ հարցերը: Այս տեսակետից «Մտերիմներ և մտորումներ» ժողովածուում տեղ գտած բոլոր ուսումնասիրությունները ինչ-որ տեղ լրացնում ու ամբողջացնում են իրար և փոխադարձաբար պայմանավորում են մեկը մյուսին: Հասկանալի է, որ այս հանգամանքը ավելի որոշակի է դարձնում նրա ներքին տրամաբանական կառուցվածքը, գրականագիտական նպատակասլացությունը:

Իսկ գրականագետի գրիչը դուր ու դադար չուներ... 1969 թվականին հրատարակվեց նրա «Հովհաննես Թումանյան (կյանքի և ստեղծագործության պատմությունը)» ընդարձակ մենագրության առաջին հատորը, որը եղավ առ այսօր վերջին ու ամփոփիչ խոսքը թումանյանագիտության ասպարեզում: Այդ մենագրության համար 1970 թվականին Ինճիկյանին շնորհվեց բանասիրական գիտությունների գիտական աստիճան, իսկ աշխատության մասին դրվատական գրախոսականներով հանդես եկան հանրապետության թերթերն ու ամսագրերը:

Արվածը շատ էր, անելիքը՝ ավելի շատ, և այսօր էլ Արամ Ինճիկյանը քայլում է երիտասարդներին համաքայլ և սիրով նրանց է հաղորդում իր ամբարած վիթխարի փորձն ու գիտելիքները:

Բարի երթ նրան:

Սովետական Հայաստան, 1971, № 7, հունվարի 9